# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/32 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան**

**25 ապրիլի 2025թ.**

2025թ. ապրիլի 3-ից ապրիլի 25-ը, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի ունեցավ լաբորատոր պարագաների և սարքերի ձեռքբերման նպատակով ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/32 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Լ. Հարությունյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Կենսագիտության և ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչ, |
| Ռ. Հայրապետյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների» ամբիոնի մասնագետ, |
| Ա. Ադամյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Մորֆոլոգիայի և կենդանագիտության ամբիոնի մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Հարությունյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Թադևոսյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:

5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. ապրիլի 3-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 12:15-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին (ՀՀ դրամ) | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Գծանիշ մարկեր (ապակու) ջերմակայուն | - | Չկայացած | 2100 |
| 2 | Նշտարիկներ | - | Չկայացած | 2000 |
| 3 | Նշտարի բռնիչ | - | Չկայացած | 3000 |
| 4 | Նշտարի ստերիլ սայր № 21 | - | Չկայացած | 7500 |
| 5 | Նշտարի ստերիլ սայր № 22 | - | Չկայացած | 7500 |
| 6 | Կողահատիչ | - | Չկայացած | 10000 |
| 7 | Լանցետ լաբորատոր | - | Չկայացած | 6000 |
| 8 | Փորձանոթներ | - | Չկայացած | 5000 |
| 9 | Փորձանոթի գազատար խողովակ | - | Չկայացած | 3000 |
| 10 | Փորձանոթների շտատիվ | - | Չկայացած | 6000 |
| 11 | Չափիչ բաժակ 2000 մլ | - | Չկայացած | 7500 |
| 12 | Տանձիկներ | - | Չկայացած | 1500 |
| 13 | Սպիրտաչափ 0-10° | - | Չկայացած | 10000 |
| 14 | Սպիրտաչափ 10-20° | - | Չկայացած | 10000 |
| 15 | Սպիրտաչափ 30-40° | - | Չկայացած | 10000 |
| 16 | Բաժանիչ ձագար | - | Չկայացած | 9000 |
| 17 | Մենզուր | - | Չկայացած | 8000 |
| 18 | Հախճապակե գդալ | - | Չկայացած | 3000 |
| 19 | Հախճապակե շպատել | - | Չկայացած | 3000 |
| 20 | Ջերմաչափ սնդիկային 0-70°C | - | Չկայացած | 9000 |
| 21 | Ջերմաչափ (0+1000 C) | - | Չկայացած | 2400 |
| 22 | Նիտրատ-թեստեր 2 | 60000 | 04.04.2025 12:15 | 80000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 23 | Ունելի հարթ-սուր | - | Չկայացած | 3500 |
| 24 | Ունելի հարթ -ոչ սուր | - | Չկայացած | 7000 |
| 25 | Ունելի ատամնավոր-ոչ սուր | - | Չկայացած | 7000 |
| 26 | Ունելի ատամնավոր-սուր | - | Չկայացած | 7000 |
| 27 | Թթվաչափ-աչիդոմետր | - | Չկայացած | 60000 |
| 28 | EC - մետր | 35000 | 04.04.2025 12:15 | 45000 |

ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/32 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/32 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե; հեռ. | Էլ. Փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «ԱՄՌԱ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ | Լոռի Վանաձոր Վարդանանց Փ. 86 ԲՆ.76 , +37494644318 | amra.service@mail.ru | 06972147 |
| 2 | «Մեդիսար» ՍՊԸ | ք. Երևան Գետառի 4/9, 010-543079, 095-543078 | sales@medisar.am, info@medisar.am | 02555635 |

2025 թվականի ապրիլի 4-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/32 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին՝ բացառությամբ.

**«ԱՄՌԱ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը հաստատված չեն թվային-էլեկտրոնային ստորագրությամբ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. ապրիլի 4-ին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Հ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակցի դեպքում «X» |
| 22 | 1 | «ԱՄՌԱ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ | 80000 | 80000 | 20% | 96000 | 59400 | 20% | 71280 | X |
| 22 | 2 | «Մեդիսար» ՍՊԸ | 80000 | 60000 | 20% | 72000 | 60000 | 20% | 72000 | |
| 28 | 1 | «Մեդիսար ՍՊԸ» | 45000 | 35000 | 20% | 42000 | 35000 | 20% | 42000 | X |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2025 թվականի ապրիլի 17-ին, Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Ընթացակարգը 1-21-րդ և 23-27-րդ չափաբաժինների մասով հայտարարել որպես չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետը:

3. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և համակարգում ծանուցման միջոցով առաջարկել շտկման ենթակա անհամապատասխանություններ ունեցող մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2025 թվականի ապրիլի 21-ին, Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Սահմանված ժամկետներում մասնակցի կողմից չեն ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2025թ. ապրիլի 23-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «ԱՄՌԱ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները:

1. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «ԱՄՌԱ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ռեկտորին:

2025թ. ապրիլի 23-ին, Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Ընթացակարգը 22-րդ չափաբաժնի մասով հայտարարել որպես չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

3. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

4. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 22-րդ | «ԱՄՌԱ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ | անբավարար |
| 28-րդ | «Մեդիսար» ՍՊԸ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին ճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված Աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Թադևոսյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարությունների տեքստերը:

2025թ. ապրիլի 23-ին, Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարության տեքստերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն եղել և պարզաբանումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագ/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Լ. Հարությունյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ռ. Հայրապետյան ____________

Ա. Ադամյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Թադևոսյան ____________